

ՀՀ ԳԱԱ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏԻ

ՃՈՃԱՆԱԿ ԿՐՈՂ ԹՈՂՈՂ ՍԱՐՔԻ ՇԱՐԺՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ
ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄԸ

Ա. 02. 01 – «Տեսական մեխանիկա» մասնագիտությամբ
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

ИНСТИТУТ МЕХАНИКИ НАН РА

ШАГИНЯН АРМАН СМБАТОВИЧ

УПРАВЛЕНИЕ И СТАБИЛИЗАЦИЯ ДВИЖЕНИЙ ЛЕТАТЕЛЬНОГО
АППАРАТА НЕСУЩЕГО МАЯТНИК

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата физико-
математических наук по специальности 01.02.01—«Теоретическая
механика»

ЕРЕВАН – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ
Ա.Ս.Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Վ. Վ. Ավետիսյան
ֆ.մ.գ.թ., դոցենտ Ա.Գ.Մաթևոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2021թ. հուլիսի -2ին՝ ժամը 14⁰⁰-ին ՀՀ
ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտում գործող 047 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0019 ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/2, alexkhach49@yandex.ru
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի
գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2021թ. մայիսի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, ֆ.մ.գ.դ.

 Վ.Վ.Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель доктор физ-мат. наук, профессор,
член-корреспондент НАН РА,
А. С. Аветисян

Официальные оппоненты доктор физ-мат. наук, профессор,
В. В. Аветисян
кандидат физ-мат. наук, доцент
А. Г. Матевосян

Ведущая организация Национальный политехнический
университет Армении

Защита состоится 2-ого июля 2021 г. в 14⁰⁰ на заседании специализированного совета
ВАК “Механика”-047, действующего в институте механики НАН РА.

Адрес: 00196 г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/2, avsah@mechins.am.

С диссертацией можно ознакомиться в библиотеке института механики НАН РА.

Автореферат разослан 21-ого Мая 2021 г.

Ученый секретарь специализированного совета

Доктор физ-мат. наук,  А. М. Хачатрян.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Անօդաչու թռչող սարքերը (ԱԹՍ), ընդհանուր առմամբ, թռչող մեքենաներ են, որոնք չեն պահանջում վերահսկող անձնակազմ: Անօդաչու թռչող սարքերը կարող են համարվել նաև թռչող ռոբոտներ: ԱԹՍ-ների պատմությունը սկսվում է դեռևս 1880-ականներից, երբ այդ ռոբոտներն օգտագործվում էին հիմնականում ռազմական նպատակներով: 1920 թվին հաջողությամբ նախագծվեց և կառուցվեց առաջին ոչ ռազմական քառաթև ԱԹՍ-ն: Այն կոչվեց Դ Բոտեզաթի անունով և հաջողության հասավ իր առաջին թռիչքում: Մարդկանց կողմից անօդաչու թռչող սարքեր օգտագործելու առաջին ձևերից մեկը եղել է մեծ բարձրության վրա լուսանկարիչներ լինելը: Այնուամենայնիվ, այս չափազանց պարզ ԱԹՍ-ները հայտնի չէին մինչև առաջին համաշխարհային պատերազմի ժամանակները: Իրենց ժողովրդականությունն ձեռք բերելուց մի քանի տարի անց դրանք կիրառվեցին ռազմական նպատակներով՝ չպայթած ռումբերի վերացում, վնասված շենքերի գնահատում, հակառակորդի ուժերի հետախուզում և այլն:

Տասնամյակներ անց, գիտության ու տեխնոլոգիաների զարգացման հետ միասին անօդաչու թռչող սարքերը նույնպես ավելի կատարելագործվեցին, և այժմ դրանք ունակ են շատ ավելի բարդ առաքելություններ իրականացնել ոչ միայն ռազմական ուժերում, այլև քաղաքացիական նպատակներով: Ներկայումս ԱԹՍ-ների կիրառման բնագավառը ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են քարտեզագրումը, օդի աղտոտման, հողի որակի, էլեկտրահաղորդման գծերի ստուգումը, հրդեհների հայտնաբերումը, գյուղատնտեսական տարբեր խնդիրների լուծումը և այլ ծրագրեր:

Բոլոր անօդաչու թռչող սարքերից գիտնականների և հետազոտողների շրջանում առավել մեծ հետաքրքրություն են առաջացնում քառաթև ԱԹՍ-երը՝ իրանց կառուցվածքի պարզության, էժան գնի և չափազանց ճկուն դինամիկ ներուժի պատճառով: Այս տեսակի ռոբոտների դինամիկային և ղեկավարմանն են նվիրված մեծ քանակի տարբեր գիտնականների հետազոտություններ: Կան նաև աշխատանքներ, որոնցում քննարկվում են ղեկավարման մի քանի նոր մեթոդներ, որոնք կոչվում են հիբրիդային մեթոդներ: Հիբրիդային ղեկավարման նմուշների օրինակներ ներկայացված են Բոհանգ և Դաոբո Վանգերի, Տակկուեն Կուի, Շանկար Սասթոայի և այլոց աշխատանքներում:

Ներկայացվող աշխատանքում հետազոտված է անօդաչու թռչող սարքի ղեկավարումը, օպտիմալ ղեկավարումը, կայունացումը և օպտիմալ կայունացումը, երբ թռչող սարքը կրում է ճոճանակ, որը կարող է ինչպես կախված լինել սարքից, այնպես էլ դրված լինել դրա վրա:

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրվող համակարգերի համար կառուցել ղեկավարող և օպտիմալ ղեկավարող ադդեցությունները և ստանալ դիտարկվող համակարգի շարժումների անալիտիկ տեսքերը:

Գիտական նորույթը կայանում է նրանում, որ մենք մշակել ենք ղեկավարման նոր եղանակ, որն անվանել ենք հիբրիդային եղանակ: Հիբրիդային եղանակի

էությունը կայանում է նրանում, որ մենք նախ լուծում ենք ստացված համակարգի մի մասի՝ ենթահամակարգի համար օպտիմալ կայունացման խնդիր, ընդունելով ֆազային կոորդինատներից մի քանիսը որպես ղեկավարող ազդեցություններ, այնուհետև, օգտագործելով ստացված օպտիմալ լուծումները, լուծում ենք ամբողջ համակարգի ղեկավարման խնդիրը:

Հետազոտման եղանակները: Աշխատանքում օգտագործվում են տեսական մեխանիկայի, դիֆերենցիալ հավասարումների, գծային հանրահաշվի, ղեկավարման տեսության, օպտիմալ ղեկավարման տեսության, շարժման կայունության, կայունացման և օպտիմալ կայունացման տեսությունների հետազոտման եղանակները:

Աշխատանքի գործնական արժեքը: Բեռնավորված և առանց բեռի շարժվող ԱԹՍ-երի ղեկավարման, օպտիմալ և հիբրիդային ղեկավարման, օպտիմալ կայունացման խնդիրների լուծումը ունիանժխտելի գործնական կարևորություն և կիրառություն, ինչպես նաև հնարավորություն է տալիս մեծացնելու անօդաչու թռչող սարքերի օգտագործման արդյունավետությունը իրական կյանքի տարբեր բնագավառներում:

Հիմնավորումը և հավաստիությունը: Ատենախոսությունում ստացված արդյունքները հիմնված են կայունության, ղեկավարման և կայունացման տեսությունների խիստ մաթեմատիկական ապարատի հավաստիության, ինչպես նաև տեսական արդյունքների և կոնկրետ խնդիրների լուծումների և թվային արդյունքների համեմատության վրա (կատարված Wolfram Mathematica 11.2 և MATLAB միջավայրերում): Հետազոտության հիմնական արդյունքները բերված են եզրակացության մեջ:

Ատենախոսության արդյունքները զեկուցվել և քննարկվել են.

- Երիտասարդ գիտնականների միջազգային դպրոց-գիտաժողովում, 3-7 հոկտեմբերի, 2016, Օադկաձոր, Հայաստան,
- ՀՀ ԳԱԱ 75 ամյակին նվիրված «Դեֆորմացվող միջավայրերի փոխազդեցության խնդիրները» ինտերոլ միջազգային գիտաժողովում 1-6 հոկտեմբեր, 2018, Գորիս, Հայաստան,
- ԵՊՀ մեխանիկայի ամբիոնի սեմինարներում (Երևան, 2016-2021 թթ)

Ատենախոսությունն ամբողջությամբ զեկուցվել և քննարկվել է ԵՊՀ մեխանիկայի ամբիոնի սեմինարում (16.04.2021թ.) և ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի սեմինարում (06.05.2021թ.):

Հրատարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրվել են 7 աշխատանքներում, որոնց ցուցակը բերված է սեղմագրի վերջում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 118 տպագիր էջ, ներառելով 5 նկար, 62 գրաֆիկ, իսկ գրականության ցանկը պարունակում է 56 անուն գիրք և հոդված:


ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորում է ատենախոսության արդիականությունը, տրվում է ատենախոսությունում դիտարկվող խնդիրների հետ անմիջականորեն առնչվող գրականության համառոտ վերլուծություն:

Առաջին գլխում դիտարկված է չբեռնավորված անօդաչու թռչող սարք:

§1.1. ում ներկայացված է նկ. 1-ում պատկերված քառաթև ԱԹՍ-ի կառուցվածքը:

Ընտրենք կոորդինատական համակարգեր, ինչպես ցույց է տրված նկ. 1-ում: $Oxyz$ -ը O կետում տեղադրված անշարժ իներցիալ համակարգ է, իսկ $O_Bx_By_Bz_B$ համակարգը պինդ ամրացված է ԱԹՍ-ին: Նկ. 1-ում ցույց են տրված նաև ամեն մի պտուտակի առաջացրած ուժը և պտտող մոմենտը որոնք ազդում են անօդաչու թռչող սարքի վրա: Պտուտակները համարակալված են 1-ից 4:



Նկար 1 Դասական քառաթև ԱԹՍ-ի կառուցվածքը

հարթության շեղումը հորիզոնական դիրքից և պտույտը) նկարագրելու համար օգտվենք Էյլերի անկյուններից: Φ -ով նշանակենք ԱԹՍ ամրացված կոորդինատական համակարգի պտտման անկյունը Ox առանցքի շուրջը, Θ -ով նշանակենք ԱԹՍ ամրացված համակարգի պտտման անկյունը Oy առանցքի շուրջը, իսկ Ψ -ով՝ Oz առանցքի շուրջը: Նշանակենք

$$\vec{\eta} = (\Phi \quad \Theta \quad \Psi)^T \quad (1)$$

$O_Bx_By_Bz_B$ համակարգում ԱԹՍ արագության \vec{V}_B վեկտորը և անկյունային արագության $\vec{\nu}$ վեկտորը կունենան հետևյալ տեսքերը:

$$\vec{V}_B = (v_{x,B} \quad v_{y,B} \quad v_{z,B})^T, \quad \vec{\nu} = (p \quad q \quad r)^T \quad (2)$$

Ենթադրենք ԱԹՍ համաչափ է O_Bx_B և O_By_B առանցքների նկատմամբ: Այդ դեպքում իներցիայի մոմենտների I մատրիցը կունենա անկյունագծային տեսք, ընդ որում $I_{xx} = I_{yy}$:

Նշանակենք ω_i -ով ԱԹՍ-ի i -րդ պտուտակի անկյունային արագությունը: Բոլոր 4 պտուտակների առաջացրած համագոր ուժը նշանակենք T -ով: Այն ուղղված է O_Bz_B առանցքով: $\vec{\tau}_B$ -ով նշանակենք $\tau_\Phi, \tau_\Theta, \tau_\Psi$ պտտող մոմենտներից

կազմված վեկտորը, որտեղ $\tau_\Phi, \tau_\Theta, \tau_\Psi$ էյլերի անկյուններին համապատասխանող պտտող մոմենտներն են: Կունենանք.

$$T = \sum_{i=1}^4 F_i = k \sum_{i=1}^4 \omega_i^2, \quad \overline{T_B} = (0 \quad 0 \quad T)^T \quad (3)$$

$$\overline{\tau_B} = (\tau_\Phi \quad \tau_\Theta \quad \tau_\Psi)^T = \left(Ik(-\omega_2^2 + \omega_4^2) \quad Ik(-\omega_1^2 + \omega_3^2) \quad \sum_{i=1}^4 \tau_{M_i} \right)^T \quad (4)$$

Այստեղ l -ը ԱԹՄ զանգվածների կենտրոնի և պտուտակի կենտրոնի միջև հեռավորությունն է, որտեղ k -ն դրական հաստատուն է:

Օգտվելով Նյուտոնի II օրենքից և էյլերի դինամիկական հավասարումներից, գրենք ԱԹՄ շարժման դիֆերենցիալ հավասարումները: Որոշ պարզ ձևափոխություններից հետո կունենանք.

$$\begin{cases} \ddot{x} = \frac{T}{m} c_\Psi s_\Theta c_\Phi + \frac{T}{m} s_\Psi s_\Phi & \dot{\Phi} = p + \frac{s_\Phi s_\Theta}{c_\Theta} q + \frac{c_\Phi s_\Theta}{c_\Theta} r & \dot{p} = \frac{(I_{yy} - I_{zz})qr}{I_{xx}} - I_r \frac{q}{I_{xx}} \omega_\Gamma + \frac{\tau_\Phi}{I_{xx}} \\ \ddot{y} = \frac{T}{m} s_\Psi s_\Theta c_\Phi - \frac{T}{m} c_\Psi s_\Phi & \dot{\Theta} = c_\Phi q - s_\Phi r & \dot{q} = \frac{(I_{zz} - I_{xx})pr}{I_{yy}} - I_r \frac{p}{I_{yy}} \omega_\Gamma + \frac{\tau_\Theta}{I_{yy}} \\ \ddot{z} = -g + \frac{T}{m} c_\Theta c_\Phi & \dot{\Psi} = \frac{s_\Phi}{c_\Theta} q + \frac{c_\Phi}{c_\Theta} r & \dot{r} = \frac{(I_{xx} - I_{yy})pq}{I_{zz}} - I_r \frac{q}{I_{zz}} \omega_\Gamma + \frac{\tau_\Psi}{I_{zz}} \end{cases} \quad (5)$$

Կատարենք հետևյալ նշանակումները.

$$\begin{aligned} x_1 = x, \quad x_2 = \dot{x}, \quad x_3 = y, \quad x_4 = \dot{y}, \quad x_5 = z, \quad x_6 = \dot{z}, \\ x_7 = \Phi, \quad x_8 = \Theta, \quad x_9 = \Psi, \quad x_{10} = p, \quad x_{11} = q, \quad x_{12} = r \end{aligned} \quad (6)$$

Այդ դեպքում (12)-ի գծային մոտավորությունը կլինի.

$$\begin{aligned} \dot{x}_1 = x_2, \quad \dot{x}_2 = g x_8, \quad \dot{x}_3 = x_4, \quad \dot{x}_4 = -g x_7, \quad \dot{x}_5 = x_6, \quad \dot{x}_6 = u_1 \\ \dot{x}_7 = x_{10}, \quad \dot{x}_8 = x_{11}, \quad \dot{x}_9 = x_{12}, \quad \dot{x}_{10} = \frac{u_2}{I_{xx}}, \quad \dot{x}_{11} = \frac{u_3}{I_{yy}}, \quad \dot{x}_{12} = \frac{u_4}{I_{zz}} \end{aligned} \quad (7)$$

որտեղ

$$u_1 = \frac{T}{m} - g, \quad u_2 = \tau_\Phi, \quad u_3 = \tau_\Theta, \quad u_4 = \tau_\Psi$$

Օգտվելով Կալմանի հայտանիշից, ստուգված է (7) համակարգի լրիվ դեկավարելիությունը:

§1.2. -ում ԱԹՄ-ի գծային մոդելի համար ձևակերպված և լուծված է օպտիմալ դեկավարման խնդիրը:

Ընդհանուր դեպքում օպտիմալ դեկավարման խնդիրը ձևակերպվում է հետևյալ կերպ.

Խնդիր 1: Դիցուք տրված է (7) համակարգը, համակարգի սկզբնական $x(0) = x_0$ դիրքը և ցանկալի վերջնական $x(t_1) = x_d$ դիրքը: Պահանջվում է գտնել այնպիսի $u_1^0, u_2^0, u_3^0, u_4^0$ օպտիմալ դեկավարող ազդեցություններ, որոնք (7) համակարգը $x(0) = x_0$ սկզբնական դիրքից կտեղափոխեն $x(t_1) = x_d$ վերջնական դիրք՝

$$\int_0^{t_1} (u_1^2 + u_2^2 + u_3^2 + u_4^2) d\tau \quad (8)$$

որակի հայտանիշին տալով մինիմալ արժեք:

Լուծում: Հայտնի է, որ օպտիմալ ղեկավարող ազդեցությունները կարող ենք գրել $u^0(t) = B^T X^T(t, t_1)$ դետեքով, որտեղ B -ն ղեկավարման մատրիցն է: Որոշ պարզ քայլերից հետո կունենանք.

$$u_1^0 = \frac{6(x_{05} - x_{d5} + t_1 x_{06})}{t_1^2} + \left(\frac{12(x_{05} - x_{d5} + t_1 x_{06})}{t_1^3} - \frac{6(x_{06} - x_{d6})}{t_1^2} \right) (t - t_1) - \frac{4(x_{06} - x_{d6})}{t_1}$$

$$u_2^0 = -\frac{4I_{xx}}{gt_1^7} \left[210(x_{03} - x_{d3})(20t^3 - t_1^3) - 30t_1^4(4x_{04} - 3x_{d4}) + \right. \\ \left. + (30x_{07} + 4t_1 x_{010} - 15x_{d7} + t_1 x_{d10})gt_1^5 + 1260tt_1(x_{03} - x_{d3})(2t_1 - 5t) + \right. \\ \left. + 2100t^3 t_1(x_{04} + x_{d4}) + 90tt_1^3(15x_{04} + 13x_{d4}) - 180t^2 t_1^2(18x_{04} + 17x_{d4}) - \right. \\ \left. - 30gt_1^4(10x_{07} - 7x_{d7}) - 15gtt_1^5(2x_{010} + x_{d10}) - 420gt^2 t_1^2(x_{07} - x_{d7}) + \right. \\ \left. + 45gt^2 t_1^3(15x_{07} - 13x_{d7}) + 15gt^2 t_1^4(4x_{010} + 3x_{d10}) - 35gt^3 t_1^3(x_{010} + x_{d10}) \right]$$

$$u_3^0 = -\frac{4I_{yy}}{gt_1^7} (4200t^3 x_{01} - 210t_1^3 x_{01} - 120t_1^4 x_{02} - 4200t^3 x_{d1} + 210t_1^3 x_{d1} - 90t_1^4 x_{d2} - \\ - 30gt_1^5 x_{08} - 4gt_1^6 x_{011} + 15gt_1^5 x_{d8} - gt_1^6 x_{d11} + 2520tt_1^2 x_{01} - 6300t^2 t_1 x_{01} + 1350tt_1^3 x_{02} + \\ + 2100t^3 t_1 x_{02} - 2520tt_1^2 x_{d1} + 6300t^2 t_1 x_{d1} + 1170tt_1^3 x_{d2} + 2100t^3 t_1 x_{d2} - 3240t^2 t_1^2 x_{02} - \\ - 3060t^2 t_1^2 x_{d2} + 300gtt_1^4 x_{08} + 30gtt_1^5 x_{011} - 210gtt_1^4 x_{d8} + 15gtt_1^5 x_{d11} - 675gt^2 t_1^3 x_{08} + \\ + 420gt^3 t_1^2 x_{08} - 60gt^2 t_1^4 x_{011} + 35gt^3 t_1^3 x_{011} + 585gt^2 t_1^2 x_{d8} - 420gt^3 t_1^2 x_{d8} - 45gt^2 t_1^4 x_{d11} + \\ + 35gt^3 t_1^3 x_{d11})$$

$$u_4^0 = \frac{2I_{zz}(6tx_{09} - 3t_1 x_{09} - 6tx_{d9} + 3t_1 x_{d9} - 2t_1^2 x_{012} - t_1^2 x_{d12} + 3tt_1 x_{012} + 3tt_1 x_{d12})}{t_1^3}$$

Թվային օրինակ: Ենթադրենք ունենք պարամետրերի հետևյալ արժեքները.


$$I_{xx} = I_{yy} = 4.856 \times 10^{-3} \text{ kg} \cdot \text{m}^2, \quad I_{zz} = 8.801 \times 10^{-3} \text{ kg} \cdot \text{m}^2, \quad g = 9.81 \frac{\text{m}}{\text{s}^2}, \quad t_0 = 0 \text{ s}, \quad t_1 = 15 \text{ s},$$

$$x(0) = 0, \quad x(15) = \left(50 \quad 0 \quad 30 \quad 0 \quad 10 \quad 0 \quad 0 \quad 0 \quad \frac{\pi}{2} \quad 0 \quad 0 \quad 0 \right)^T$$


Պարամետրերի այս արժեքների դեպքում օպտիմալ ղեկավարող ազդեցությունները կլինեն.

$$\begin{pmatrix} u_1^0 \\ u_2^0 \\ u_3^0 \\ u_4^0 \end{pmatrix} = \begin{pmatrix} 0.27 - 0.036t \\ 1.5 \times 10^{-6} (t - 15)^3 + 3.3 \times 10^{-5} (t - 15)^2 + 2 \times 10^{-4} t - 2.7 \times 10^{-3} \\ -2.4 \times 10^{-6} (t - 15)^3 - 5.5 \times 10^{-5} (t - 15)^2 - 3.3 \times 10^{-4} t + 4.5 \times 10^{-3} \\ 3.7 \times 10^{-4} - 4.9 \times 10^{-5} t \end{pmatrix}$$


Օպտիմալ ֆազային հետագծերը ցույց են տրված Նկ.2 – Նկ.5 պատկերներում:




Նկար 2 ԱԹՍ զանգվածների կենտրոնի X, Y և Z կոորդինատների օպտիմալ հետագծերի գրաֆիկները:



Նկար 3 ԱԹՍ զանգվածների կենտրոնի օպտիմալ արագությունների գրաֆիկները:



Նկար 4 ԱԹՍ պտտման էյլերի անկյունների գրաֆիկները:



Նկար 5 ԱԹՍ պտտման անկունային արագությունները:

§1.3-ում ԱԹՍ-ի զծային մոդելի համար ձևակերպված և լուծված է օպտիմալ կայունացման խնդիրը:

Խնդիր 2: Տրված է (7) համակարգը, համակարգի սկզբնական $x(0) = x_0$ դիրքը:

Պահանջվում է գտնել այնպիսի $u^0 = (u_1^0 \ u_2^0 \ u_3^0 \ u_4^0)^T$ օպտիմալ ղեկավարող ազդեցություններ, որոնք համակարգը տրված սկզբնական դիրքից կբերեն ասիմպտոտիկ կայուն դիրքի, մինիմիզացնելով

$$J[\bullet] = \int_0^{\infty} \left(\sum_{i=1}^{12} x_i^2 + \sum_{i=1}^4 u_i^2 \right) d\tau \quad (9)$$

ֆունկցիոնալը:

Լուծում: Խնդիրը լուծենք՝ օգտվելով Լյապունով-Բելմանի մեթոդից: Նկատենք, որ (15) համակարգը հնարավոր է ներկայացնել չորս տարբեր համակարգերի միջոցով:

Այսինքն՝ մենք կունենանք չորս հատ իրարից անկախ լրիվ ղեկավարելի համակարգ: Դա նշանակում է, որ մենք կարող ենք խնդիրը լուծել յուրաքանչյուր համակարգի համար առանձին: Պարամետրերի $a = 1/I_{xx} = 1/I_{yy} = 205.93 \text{ .1/կգ.մ}^2$, $g = 9.81 \text{ մ/վրկ}^2$ արժեքների դեպքում կունենանք.

$$\begin{aligned}
V_1^0(x_5, x_6) &= 1.732x_5^2 + 2x_5x_6 + 1.732x_6^2 \\
V_2^0(x_3, x_4, x_7, x_{10}) &= 1.457x_3^2 + 0.712x_4^2 + 5.574x_7^2 + 0.00499x_{10}^2 + 1.121x_3x_4 - \\
&- 2.053x_3x_7 - 0.00971x_3x_{10} - 2.979x_4x_7 - 0.0141x_4x_{10} + 0.0534x_7x_{10} \\
V_3^0(x_1, x_2, x_8, x_{11}) &= 1.457x_1^2 + 0.712x_2^2 + 5.574x_8^2 + 0.00499x_{11}^2 + 1.121x_1x_2 + \\
&+ 2.053x_1x_8 + 0.00971x_1x_{11} + 2.979x_2x_8 + 0.0141x_2x_{11} + 0.0534x_8x_{11} \\
V_4^0(x_9, x_{12}) &= 1.009x_9^2 + 0.0176x_9x_{12} + 0.0089x_{12}^2
\end{aligned} \tag{10}$$

Հետևաբար, օպտիմալ ղեկավարող ազդեցությունները կլինեն.

$$\begin{aligned}
u_1^0 &= -\frac{1}{2} \frac{\partial V_1}{\partial x_6} = -x_5 - 1.732x_6, \quad u_4^0 = -\frac{1}{2} b \frac{\partial V_4}{\partial x_{12}} = -x_9 - 1.0112x_{12} \\
u_2^0 &= -\frac{1}{2} a \frac{\partial V_2}{\partial x_{10}} = 1.00082x_3 + 1.452x_4 - 5.498x_7 - 1.0276x_{10} \\
u_3^0 &= -\frac{1}{2} a \frac{\partial V_3}{\partial x_{11}} = -1.00082x_1 - 1.452x_2 - 5.498x_8 - 1.0276x_{11}
\end{aligned} \tag{11}$$

Ստացված արդյունքներն ավելի պատկերավոր ցույց տալու համար մենք օպտիմալ ղեկավարող ազդեցությունների համար ստացված (11) արտահայտությունները տեղադրել ենք (7) համակարգի մեջ և ստացել ենք սովորական դիֆերենցյալ հավասարումների հետևյալ համակարգը.

$$\begin{cases}
\dot{x}_1 = x_2, \quad \dot{x}_2 = gx_8, \quad \dot{x}_3 = x_4, \quad \dot{x}_4 = -gx_7, \quad \dot{x}_5 = x_6 \\
\dot{x}_6 = -x_5 - 1.732x_6, \quad \dot{x}_7 = x_{10}, \quad \dot{x}_8 = x_{11}, \quad \dot{x}_9 = x_{12} \\
\dot{x}_{10} = \frac{1.00082x_3 + 1.452x_4 - 5.498x_7 - 1.0276x_{10}}{I_{xx}} \\
\dot{x}_{11} = \frac{-1.00082x_1 - 1.452x_2 - 5.498x_8 - 1.0276x_{11}}{I_{yy}} \\
\dot{x}_{12} = \frac{-x_9 - 1.0112x_{12}}{I_{zz}}
\end{cases}$$

որի լուծումները

$$\begin{aligned}
x_{1,0} &= 50, \quad x_{2,0} = 0, \quad x_{3,0} = 30, \quad x_{4,0} = 0, \quad x_{5,0} = 10, \quad x_{6,0} = 0, \\
x_{7,0} &= 0, \quad x_{8,0} = 0, \quad x_{9,0} = \frac{\pi}{2}, \quad x_{10,0} = 0, \quad x_{11,0} = 0, \quad x_{12,0} = 0
\end{aligned}$$

սկզբնական պայմանների դեպքում կլինեն.

$$\begin{cases}
x_1 = -0.00057e^{-209.407t} (e^{3.215t} - 1352000e^{208.399t} + 481439.64e^{207.2t} \cos(2.204t) - 136094.805e^{207.2t} \sin(2.204t)) \\
x_2 = 0.0118e^{-209.407t} (e^{3.215t} - 6609.404e^{208.399t} + 6608.404e^{207.2t} \cos(2.204t) + 3689.331e^{207.2t} \sin(2.204t)) \\
x_3 = -0.000034e^{-209.407t} (e^{3.215t} - 1.352e^{208.399t} + 481439.643e^{207.2t} \cos(2.204t) - 136094.805e^{207.2t} \sin(2.204t)) \\
x_4 = 0.007e^{-209.407t} (e^{3.215t} - 6609.404e^{208.399t} + 6608.404e^{207.2t} \cos(2.204t) + 3689.331e^{207.2t} \sin(2.204t)) \\
x_5 = 10e^{-0.881t} (\cos(0.473t) + 1.862\sin(0.473t)) \\
x_6 = -21.136e^{-0.881t} \sin(0.473t) \\
x_7 = 0.149e^{-209.407t} (e^{3.215t} - 32.305e^{208.399t} + 31.305e^{207.2t} \cos(2.204t) + 110.131e^{207.2t} \sin(2.204t)) \\
x_8 = -0.249e^{-209.407t} (e^{3.215t} - 32.305e^{208.399t} + 31.305e^{207.2t} \cos(2.204t) + 110.131e^{207.2t} \sin(2.204t)) \\
x_9 = -0.014e^{-114.896t} (e^{0.998t} - 114.174e^{113.898t}) \\
x_{10} = -30.786e^{-209.407t} (e^{3.215t} - 0.158e^{208.399t} - 0.842e^{207.2t} \cos(2.204t) + 1.514e^{207.2t} \sin(2.204t)) \\
x_{11} = 51.31e^{-209.407t} (e^{3.21t} - 0.158e^{208.399t} - 0.842e^{207.2t} \cos(2.204t) + 1.514e^{207.2t} \sin(2.204t)) \\
x_{12} = 1.581e^{-114.896t} (e^{0.998t} - e^{113.898t})
\end{cases}$$

Հետևաբար, կունենանք օպտիմալ ղեկավարող ազդեցությունները ժամանակից կախված.

$$\begin{cases} u_1(t) = e^{-0.881t} (-10 \cos(0.473t) + 18.622 \sin(0.473t)) \\ u_2(t) = 30.827 e^{-206.192t} - 45.712 e^{-1.008t} - 1.497 e^{-2.207t} \cos(2.204t) \\ \quad - 0.194 e^{-2.207t} \sin(2.204t) \\ u_3(t) = -52.726 e^{-206.192t} + 1.352 e^{-206.192t} + 0.221 e^{-1.008t} + 1.491 e^{-2.207t} \cos(2.204t) \\ \quad - 0.033 e^{-2.207t} \sin(2.204t) \\ u_4(t) = -1.585 e^{-113.898t} + 0.0003 e^{-0.998t} \end{cases}$$

Ընտրված սկզբնական պայմանների դեպքում որակի հայտանիշը կընդունի $J^0[\bullet] = 8766.99$ միավոր մինիմալ արժեք: Այնուհետև ստացված են օպտիմալ հետագծերը և օպտիմալ ղեկավարումների գրաֆիկները:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում դիտարկված է կրկնակի մաթեմատիկական ճոճանակի օպտիմալ կայունացման խնդիրը ըստ ղեկավարումների կարևորության, որտեղ տարբեր ղեկավարող ազդեցություններ մասնակցում են տարբեր կշիռներով կամ գործակիցներով: Խնդիրը լուծված է Լյապունով-Բելմանի եղանակով, կառուցված է Լյապունովի օպտիմալ ֆունկցիան և օպտիմալ ղեկավարող ազդեցությունը: Մտացված լուծումը թույլ է տալիս նաև թվայնորեն գտնել օպտիմալ ղեկավարող ազդեցություններին համապատասխան ըստ կարևորության գործակիցների արժեքները:

Ատենախտառության երկրորդ գլխում ձևակերպված և լուծված է գծային համակարգերի նոր, հիբրիդային ղեկավարման խնդիրը:

Առաջին պարագրաֆում ձևակերպված և լուծված է հաստատուն գործակիցներով գծային դիֆերենցիալ հավասարումների համակարգի հիբրիդային ղեկավարման խնդիրը ընդհանուր դեպքում:

Դիցուք ունենք ղեկավարվող համակարգ, որը նկարագրվում է դիֆերենցիալ հավասարումների

$$\dot{x}_i = a_{i1}x_1 + \dots + a_{in}x_n + p_{i1}y_1 + \dots + p_{ik}y_k + b_{i1}u_1 + \dots + b_{ir}u_r \quad (12)$$

$$\dot{y}_j = c_{j1}y_1 + \dots + c_{jk}y_k + d_{j1}x_1 + \dots + d_{jm}x_m \quad (13)$$

համակարգով, որտեղ $a_{il}, b_{is}, c_{jq}, d_{jr}, p_{iq}$ գործակիցները իրական հաստատուններ են ($i = 1, \dots, n, j = 1, \dots, k, r \leq n - m, m \leq k \leq n, l = 1, \dots, n, s = 1, \dots, r, q = 1, \dots, k, f = 1, \dots, m$), $x_1, \dots, x_n, y_1, \dots, y_k$ -ը համակարգի ֆազային կոորդինատներն են, իսկ u_1, \dots, u_r -ը ղեկավարող ազդեցությունները:

Ներմուծելով համապատասխան A, P, B, C, D մատրիցները, (12)-(13)

համակարգը կարող ենք գրել

$$\dot{x} = Ax + Py + Bu \quad (14)$$

$$\dot{y} = Cy + D\bar{x} \quad (15)$$

տեսքով, որտեղ $x = (x_1 \ \dots \ x_n)^T$ -ը n չափանի, $y = (y_1 \ \dots \ y_k)^T$ -ը k չափանի,

$\bar{x} = (\bar{x}_1 \ \dots \ \bar{x}_m)^T$ -ը որոշ $x_1 \ \dots \ x_n$ ֆազային կոորդինատներից կազմված m

չափանի վեկտոր սյուն է, իսկ $u = (u_1 \ \dots \ u_r)^T$ -ը՝ r չափանի վեկտոր սյուն էր են: Ձևակերպենք հետևյալ խնդիրը.

Խնդիր 3: Տրված է (12)-(13) (կամ (14)-(15)) համակարգը, $[t_0, t_1]$

ժամանակահատվածը, համակարգի սկզբնական $\begin{pmatrix} x(t_0) \\ y(t_0) \end{pmatrix} = \begin{pmatrix} x_0 \\ y_0 \end{pmatrix}$ և $x(t_1) = x_1$

վերջնական դիրքերը: Պահանջվում է u_1, \dots, u_r ղեկավարող ազդեցություններն ընտրել այնպես, որ դրանք համակարգը տրված սկզբնական դիրքից տանեն տրված վերջնական դիրք:

Ենթադրենք A, B, C, D մատրիցներն այնպիսին են, որ

$$\text{rank } K_1 = \{D, CD, \dots, C^{k-1}D\} = k \quad (16)$$

$$\text{rank } K_2 = \{B_1, A_1 B_1, \dots, A_1^{n+k-1} B_1\} = n+k \quad (17)$$

$$\text{rank } K_3 = \{B_2, A_2 B_2, \dots, A_2^{n-m-1} B_2\} = n-m \quad (18)$$

որտեղ A_1, B_1, A_2, B_2 մատրիցները ևս (12)-(13) համակարգը նկարագրող մատրիցներ են:

Ենթադրենք նաև, որ (13) (կամ (15)) ենթահամակարգի վրա դրված է լրացուցիչ պայման. y_1, \dots, y_k Ֆազային կոորդինատները մնան $O(0 \ \dots \ 0)$ կետին հնարավորինս մոտ, այսինքն $y(t_1) = y_1$ լինի զրոյին անվերջ մոտ և բավարարվի տրված որակի հայտանիշը:

Դիցուք որպես որակի հայտանիշ տրված է

$$J[\bullet] = \int_{t_0}^{\infty} \left(\sum_{i,j=1}^k \alpha_{ij} y_i y_j + \sum_{i,j=1}^m \beta_{ij} x_i x_j \right) dt \quad (19)$$

Ֆունկցիոնալը:

(13) (կամ (15)) համակարգում ընտրելով x_1, \dots, x_m ֆազային կոորդինատները որպես ղեկավարող ազդեցություններ, ձևակերպենք հետևյալ խնդիրը.

Խնդիր 4: Դիցուք տրված է (13) (կամ (15)) համակարգը և (19) որակի հայտանիշը: Պահանջվում է գտնել ղեկավարող ազդեցություններն այնպես, որ (13) (կամ (15)) համակարգը դառնա ասիմպտոտիկ կայուն, իսկ (19) որակի հայտանիշն ընդունի մինիմալ արժեք:

Քանի որ (13) (կամ (15)) համակարգը (16) ենթադրության դեպքում լրիվ ղեկավարելի է, ապա ցանկացած թույլատրելի սկզբնական $y(t_0) = y_0$ արժեքի համար գոյություն ունի խնդիր 4-ը լուծող միակ $(x_1^0 \ \dots \ x_m^0)^T$ ղեկավարող ազդեցություն: Դա նշանակում է, որ $y_1^0(t), \dots, y_k^0(t)$ ֆազային կոորդինատները ևս որոշվում են միարժեք:

Վերադառնանք խնդիր 3-ին: Խնդիր 4-ի լուծումից ստացված $\bar{x}_i^0[t], \dots, \bar{x}_m^0[t]$ և $y_1^0(t), \dots, y_k^0(t)$ ֆունկցիաները տեղադրելով (12) համակարգի մեջ, կունենանք.

$$\dot{x}_i = a_{i,m+1}x_{m+1} + \dots + a_{i,n}x_n + b_{i1}u_1 + \dots + b_{in}u_n + f_i(t), \quad i = m+1, \dots, n \quad (20)$$

որտեղ


$$f_i(t) = a_{i1}\bar{x}_1^0[t] + \dots + a_{im}\bar{x}_m^0[t] + p_{i1}y_1^0(t) + \dots + p_{ik}y_k^0(t), \quad i = 1, \dots, n \quad (21)$$

Պարզ է, որ (12) համակարգի առաջին m հատ հավասարումները կդառնան հանրահաշվական հավասարումներ, քանի որ $x_i^0[t], \dots, x_m^0[t]$ ֆունկցիաներն արդեն հայտնի են:

Համաձայն (18) պայմանի, (12) - (13) համակարգը լրիվ դեկավարելի է, հետևաբար մնում է դեկավարման խնդիրների լուծման որևէ ալգորիթմով գտնել $u = (u_1(t) \ \dots \ u_r(t))^T$ դեկավարող ազդեցությունները:

Երկրորդ գլխի երկրորդ և երրորդ պարագրաֆներում հիբրիդային դեկավարման խնդրի լուծման ալգորիթմով լուծված են երկու տարբեր համակարգերի դեկավարման խնդիրներ:

§2.2-ում դիտարկված է անօդաչու թռչող սարքի դինամիկան անօդաչու սարքի վրա տեղադրված շրջված ճոճանակի հետ միասին:



Սկար 6Շրջված ճոճանակ կրող ԱԹՍ-ի մոդելը:

Նորից դիտարկենք քառաթև ԱԹՍ, որին հողակապով ամրացված է շրջված ճոճանակ (նկ.6):

Այս դեպքումս, ԱԹՍ-ի դինամիկան կունենա (5)տեսքը: Ինչ վերաբերում է ճոճանակի մաթեմատիկական մոդելին, ապա մենք կդիտարկենք դրա

դինամիկան $O_B x_B y_B z_B$ կոորդինատական համակարգում:

Իր հիմքի նկատմամբ, որն այս դեպքում O_B կետն է, ճոճանակն ունի երկու ազատության աստիճան: Նշանակենք x_p -ով և y_p -ով ճոճանակի գնդիկի կոորդինատները $O_B x_B$ և $O_B y_B$ առանցքների նկատմամբ: Այդ դեպքում նրա դիրքը

$O_B z_B$ առանցքի նկատմամբ կորոշվի $\zeta = \sqrt{l_p^2 - x_p^2 - y_p^2}$ արտահայտությամբ, որտեղ l_p -ն ճոճանակի զանգվածների կենտրոնի հեռավորությունն է իր հիմքից: Ճոճանակի դինամիկան մոդելավորենք այն ենթադրությամբ, որ դա զանգվածների կենտրոնում կենտրոնացված կետային զանգված է, չունի իներցիա և կցված է ԱԹՍ-ի զանգվածների կենտրոնին: Հետևաբար, ԱԹՍ-ի պտույտները ճոճանակի հիմքի որևէ շարժում չեն առաջացնում: Օգտվելով Լագրանժի երկրորդ սեռի հավասարումներից կազմենք ճոճանակի շարժման դիֆերենցիալ հավասարումները: Ճոճանակի համար Լագրանժի ֆունկցիան կունենա

$$\mathcal{L} = \frac{m_p}{2} \left((\dot{x} + \dot{x}_p)^2 + (\dot{y} + \dot{y}_p)^2 + \left(\dot{z} + \frac{x_p \dot{x}_p + y_p \dot{y}_p}{\zeta} \right)^2 \right) - m_p g (z + \zeta) \quad (22)$$

տեսքը: Հետևաբար, ճոճանակի շարժման դիֆերենցիալ հավասարումները կլինեն.

$$\begin{cases} \ddot{x}_p = \frac{1}{(l_p^2 - y_p^2)\zeta^2} \left(-x_p^4 \ddot{x} - (l_p^2 - y_p^2) \ddot{x} - 2x_p^3 (y_p \dot{x}_p \dot{y}_p - (l_p^2 - y_p^2) \dot{x}) + x_p^3 (\dot{y}_p^2 + y_p \dot{y}_p - \zeta (g + \ddot{z})) \right. \\ \quad \left. + x_p (-l_p^2 y_p \ddot{y}_p + y_p^3 \ddot{y}_p + y_p^2 (\dot{x}_p^2 - \zeta (g + \ddot{z})) + l_p^2 (-\dot{x}_p^2 - \dot{y}_p^2 + \zeta (g + \ddot{z}))) \right) \\ \ddot{y}_p = \frac{1}{(l_p^2 - x_p^2)\zeta^2} \left(-y_p^4 \ddot{y} - (l_p^2 - x_p^2) \ddot{y} - 2y_p^3 (x_p \dot{x}_p \dot{y}_p - (l_p^2 - x_p^2) \dot{y}) + y_p^3 (\dot{x}_p^2 + x_p \dot{x}_p - \zeta (g + \ddot{z})) \right. \\ \quad \left. + y_p (-l_p^2 x_p \ddot{x}_p + x_p^3 \ddot{x}_p + x_p^2 (\dot{y}_p^2 - \zeta (g + \ddot{z})) + l_p^2 (-\dot{x}_p^2 - \dot{y}_p^2 + \zeta (g + \ddot{z}))) \right) \end{cases} \quad (23)$$

Օգտվելով համակարգի զանգվածների կենտրոնի որոշման բանաձևից, մենք կարող ենք որոշել ԱՄՍ-ճոճանակ համակարգի զանգվածների կենտրոնի կոորդինատները $Oxyz$ անշարժ համակարգի նկատմամբ:

$$x_c = x + \frac{m_p}{m + m_p} x_p, \quad y_c = y + \frac{m_p}{m + m_p} y_p, \quad z_c = z + \frac{m_p}{m + m_p} \sqrt{l_p^2 - x_p^2 - y_p^2}$$

ԱՄՍ-ճոճանակ համակարգի շարժման դիֆերենցիալ հավասարումները առաջին կարգի համակարգի տեսքով գծային մոտավորությամբ ստանալու համար կատարենք հետևյալ նշանակումները.

